

երեխայի ռասայի, մաշկի գույնի կամ ազգային ծագման հիման վրա:

**ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ**

- Տարածաշրջանը Ձեզ անվճար թարգմանիչ չի տրամադրում:
- Աշխատակիցը որոշակի էթնիկական խմբին ավելի շատ ծրագրերի և ծառայությունների մասին է հայտնում, քան՝ այլ էթնիկական խմբի մարդկանց:
- Տարածաշրջանը չի օգնում Ձեզ՝ ծրագրի կողմնորոշման ձայնաժայթակներ գտնել, որպեսզի Ձեզ օգնի այն հաշմանդամության գործում, որը դժվարեցնում է Ձեր կարողալու կարողությունը:
- Աշխատակիցն իմանում է Ձեր կրոնի կամ քաղաքականության մասին և Ձեզ այլ կերպ է վերաբերվում:
- Ժամադրություններ չեք կարողանում ստանալ, որովհետև տարածաշրջանի շենքը վերելակ չունի:
- Ձեր անվասայլակը չեք կարողանում քննման, հարցաքննության սենյակներ կամ գուգարաններ տանել:
- Տղամարդկանց ուղարկում են ավելի լավ վճարվող աշխատանքների պատրաստման, քան՝ կանանց:
- Տարածաշրջանը չի ցանկանում, որ Դուք պատրաստում ստանաք, որովհետև Դուք “շատ ծեր եք”:
- Ձեզ թույլ չեն տալիս երեխա որդեգրել, որովհետև Դուք այլ ռասայի եք պատկանում:

**ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՈՂՈՔԵՐ**

Եթե կարծում եք, որ Ձեզ խտրականության են ենթարկել, կարող եք առանձին բողոքի դիմում ներկայացնել Տարածաշրջանին կամ Նահանգին, և Դաշնային պետությանը: Թե որ Դաշնային գործակալությանը պետք է բողոքեք, կախված է նրանից, թե որ ծրագրի մասին եք բողոքում: Դուք կարող եք խտրականության բողոք ներկայացնել հետևյալ գործակալությունների հետ՝

**1. ՁԵՐ ՏԱՐԱԾՈՇՐՋԱՆԻ ՆՊԱՍԻ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌԱՎԱՐԿԱԾ ԲՈՂՈՐ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՐ**

Տարածաշրջանի Քաղաքացիական իրավունքների կոորդինատոր: Ձեր տարածաշրջանի գրասենյակից խնդրեք նրանց Քաղաքացիական իրավունքների կոորդինատորի անունը, հասցեն և հեռախոսահամարը: Նա անկախ կերպով կհետախուզի Ձեր բողոքը:

2. Քաղաքացիական իրավունքների բյուրո California Department of Social Services  
744 P Street, MS 8-16-70  
Sacramento, CA 95814  
(916) 654-2107  
(866) 741-6241 (անվճար)
3. CalFresh ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՐ՝  
United States Department of Agriculture  
Director, Office of Civil Rights,  
Room 326-W, Whitten Bldg.  
1400 Independence Avenue, S.W.,  
Washington, D.C. 20250-9410  
(202) 720-6382 (ձայն և TTY)
4. ԲՈՂՈՐ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՐ՝  
Health and Human Services  
Office of Civil Rights  
90 7th Street, Suite 4-100  
San Francisco, CA 94103  
(415) 437-8310 (ձայն)  
(415) 437-8311 (TDD)

**ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԻՄԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ՄԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ**

Եթե Դուք խտրականության եք ենթարկվել, ապա պետք է Ձեր բողոքը հանձնեք իրական խտրականությունից 180 օրվա ընթացքում: Եթե խտրականությունը ազդել է նաև Ձեր արտոնությունների և ծառայությունների աստիճանի վրա, ապա Դուք պետք է նաև նահանգային լսում պահանջեք 90 օրվա ընթացքում: Խտրականության հետախուզությունը չի կարող փոխել Ձեր արտոնությունների աստիճանը կամ ծառայությունները... միայն նահանգային լսումը կարող է դա անել:

**ՈՐՈՇԱԿԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ**

Չնայած Դուք մասնավորության և գաղտնիության իրավունք ունեք, կան որոշակի օրենքներ, որոնք թույլատրում են սահմանափակ բացառություններ: Դուք կարող եք տարածաշրջանից խնդրել այդ օրենքները:

**ՀԱՐՅԵՐ**

- Եթե ինչ-որ հարցեր ունեք այստեղ թվարկված իրավունքների մասին, զանգահարեք Հանրային հարցումների բաժին. անվճար (800) 952-5253 հեռախոսահամարով: TDD անվճար հեռախոսահամարն է (800) 952-8349:
- **ԱՅՍ ՊԱՄՖԼԵՏԻՆ ՎԵՐԱԲԵՆԵՐՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ**
- Որդեգրմանը աջակցող ծրագիր (AAP)
- Մեծահասակների պաշտպանության ծառայություններ
- Ոգելից խմիչքների և թմրանյութերի ծրագիր Կալիֆոռնիայի Սննդային օգնության ծրագիր (CFAP)

- Medi-Cal
- CalWORKs
- CalWORKs Երեխաների խնամք
- CalWORKs Նպաստից՝ աշխատանք ծրագիր/ ծառայություններ
- Դրամական օգնության ծրագիր ներգաղթածների համար (CAPI)
- Երեխաների նպաստի ծառայություններ
- Denti-Cal
- Վաղ և պարբերական ստուգումներ, ախտորոշում և բուժում (EPSDT)
- CalFresh (Ուտելիքի կտրոններ)
- Հոգեձնողների խնամք
- Տնային օժանդակության ծառայություններ
- Ազգակցության խնամակալի օգնություն (Kin-GAP)
- Հոգեկան առողջություն
- Տարեցների բազմանպատակ ծառայությունների ծրագիր (MSSP)
- Անձնական խնամքի ծառայությունների ծրագիր (PCSP)
- Փախստականների դրամական օգնություն
- Սոցիալական ծառայություններ



STATE OF CALIFORNIA  
(ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՆԱՀԱՆԳ)  
HEALTH AND HUMAN SERVICES AGENCY  
(ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ)  
DEPARTMENT OF SOCIAL SERVICES  
(ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ)

Այս պամֆլետը մատչելի է Ձեր Տեղական տարածաշրջանի նպաստի գրասենյակում և [www.cdss.ca.gov](http://www.cdss.ca.gov) կայքէջում, հետևյալ լեզուներով՝

• արաբերեն	• ճապոներեն	• ռուսերեն
• հայերեն	• կորեերեն	• իսպաներեն
• կամբոջերեն	• լատներեն	• իսպաներեն խոշոր տառերով
• չինարեն	• միեններեն	• տապալոգ
• ֆարսի	• պորտուգալերեն	• ուկրաիներեն
• հինդու	• փունջաբի	• վյետնամերեն

Մատչելի է նաև խոշոր տառերով, Բրեյլի այբուբենով և կոմպակտ լսասկավառակով

# ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

## ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՆՊԱՍՏՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆ



..... *Կալիֆոռնիայում հանրային օգնության դիմող կամ այն ստացող մարդկանց համար*

- Մեզ հայտնեք, եթե հաշմանդամության պատճառով Ձեզ օգնություն է հարկավոր
- Անվճար թարգմանիչ խնդրեք

### Ձեր ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Հանրային օգնություն տրամադրող բոլոր մարդիկ և կազմակերպությունները պետք է հարգեն Ձեր իրավունքները։ Նրանք կարող են Ձեզ օգնել հասկանալ և դիմել արտոնություններ և օգնություն ստանալուն։

- You have the right to an interpreter free of charge
- Usted tiene derecho a un intérprete gratis.
- У вас есть право на бесплатные услуги переводчика
- 您有權免費獲得口譯員服務。
- May karapatan kayong magkaroon ng tagapagsalin na walang bayad.
- Quý vị có quyền được một thông dịch viên miễn phí.
- Koj muaj txoj cai yuav ib tug neeg txhais lus pub dawb.
- لديك الحق في الحصول على مترجم دون أية تكلفة.

- Դուք անվճար թարգմանչի իրավունք ունեք։

- ສູ່ກຍົນສົ່ງຮີ່ອຽມສູ່ກບກໂຼ່ຍ

#### ձեռքից փոխանցված փայլեր

- 여러분은 무료 통역 서비스를 받을 권리가 있습니다.
- شما حق داشتن مترجم رایگان را دارا می باشید.
- ທ່ານມີສິດຂໍໃຫ້ມີນາຍພາສາ
- ມາຊ່ວຍແປໂດຍບໍ່ເສັງຄ່າ
- ဒုတိဋ္ဌိ ခိကံ နာဏဒ ဓဉ္စာနီဇိ ဓာ ဒံခံ ဝီ၊
- Ви маєте право на безкоштовні послуги перекладача.
- Você tem direito a um intérprete gratuito.
- あなたには無料で通訳を利用する権利があります。
- Meih maaih leiz duqv mienh tengx meih faan waac kungx.

#### ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ...

- Հասկանալ, թե ինչ է տեղի ունենում Ձեր դիմումի և օգնության հետ։
- Գրավոր և բանավոր բացատրություններ ստանալ Ձեր դիմումի և օգնության մասին։
- Ձեր կողմից հանձնած ցանկացած փաստաթղթի դիմաց ստացական ստանալ։

- Տեսնել Ձեր գործի գրանցումները։
- Տեսնել նահանգային և տարածաշրջանի օրենքներն ու կանոնակարգերը։
- Դատավորին խնդրել, որ վերանայի Ձեր իրավունակության, արտոնությունների կամ ծառայությունների վերաբերյալ տարածաշրջանի ցանկացած որոշումը։
- Խտրականության ենթակա չլինել ծրագրի արտոնություններ կամ ծառայություններ ստանալու գործում։
- Խտրականության վերաբերյալ բողոք ներկայացնել։
- Լրացուցիչ օգնություն ստանալ տարածաշրջանի անձնակազմից, որպեսզի Դուք անպայման ստանաք Ձեր արտոնությունները, եթե այնպիսի հաշմանդամություն կամ անկարողություն ունեք, որը դժվարեցնում է ծրագրի օրենքները հասկանալը։
- Ձեր տեղեկությունները գաղտնի պահել։
- Քաղաքավարի և հարգալիբ վերաբերմունք ստանալ։

#### ԵԹԵ ՁԵՐ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊԿԱԾ ԽՆԴԻՆՆԵՐ ՈՒՆԵՔ.

- Ձեր տվյալների, փաստաթղթերի և տարածաշրջանի հետ բոլոր կապերի գրանցումները պահպանեք։
- Ցանկացած բան հանձնելիս` ստացական ստացեք։
- Կարող եք որևէ մեկին բերել Ձեզ հետ` Ձեր աշխատակցի հետ հանդիպմանը ներկայանալիս։
- Բողոքել**։ 4 ճանապարհով կարող եք դա կատարել.
  - Ոչ պաշտոնական*. Կարող եք խնդրել վերահսկիչի հետ գրուցել աշխատակցի հետ ունեցած խնդրի վերաբերյալ կամ օրենքների ու Ձեր օգնության կամ ծառայությունների վերաբերյալ առաջարկված գործողության մասին գրուցել։
  - Նահանգային լսում*. Նահանգային լսում պահանջեք, եթե խնդիրներ կան Ձեր օգնության կամ ծառայությունների հետ կապված։ **Դուք պետք է լսումը պահանջեք տարածաշրջանի գործողությունից 90 օրվա ընթացքում**։ Դուք կարող եք 90 օրը լրանալուց հետո ներկայացնել Ձեր խնդրանքը, եթե հարգելի պատճառ ունեք, օրինակ հիվանդություն կամ հաշմանդամություն։
  - Խտրականության բողոք*. Եթե գտնում եք, որ տարածաշրջանը խտրականացրել է Ձեզ, ապա կարող եք խտրականության

բողոք ներկայացնել Տարածաշրջանի Քաղաքացիական իրավունքների կոորդինատորին կամ Նահանգային Քաղաքացիական իրավունքների բյուրոյին և Դաշնային պետությանը։ Դա պետք է կատարեք խտրականությունից 180 օրվա ընթացքում։ Լրացուցիչ տեղեկությունների համար, տեսեք բաժինը, որը սկսվում է “Արգելված խտրականություն”-ով։

Եթե խտրականությունը նաև ազդում է Ձեր արտոնությունների կամ ծառայությունների վրա, **կարող եք նահանգային լսում պահանջել**, եթե ցանկանում եք բողոքարկել տարածաշրջանի որոշումը` Ձեր արտոնությունների կամ ծառայությունների վերաբերյալ։

- Գանձաւ*։ Դուք կարող եք տարածաշրջանի դեմ բողոք ներկայացնել, եթե նրանք գանգատի ընթացակարգ ունեն։ **Սա չի պաշտպանում Ձեր արտոնությունները** նույն ճանապարհով ինչ որ նահանգային լսումեւ է պաշտպանում։

#### ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐ

- Դուք կարող եք նահանգային լսում պահանջել, երբ որ համաձայն չլինեք Ձեր արտոնությունների կամ ծառայությունների վերաբերյալ տարածաշրջանի որոշման հետ։
- Դուք կարող եք նաև նահանգային լսում պահանջել, եթե տարածաշրջանը Ձեզ չի արտոնում այն արտոնությունները կամ ծառայությունները, որոնք Դուք` Ձեր կարծիքով, պետք է ստանաք։
- Նահանգային լսումը անց է կացնում նահանգի Վարչական օրենքի դատավորը։ Տարածաշրջանի կողմից որևէ մեկը կներկայանա, որպեսզի բացատրի իրենց կատարած գործողությունը։
- Նահանգային լսումը դատական լսում չէ։ Դուք իրավունք ունեք Ձեզ հետ ներկայացուցիչ ունենալու։ Յուրաքանչյուր տարածաշրջան անվճար իրավական ծառայություններ է տրամադրում։ Նրանք թվարկված են Ձեր տարածաշրջանի ծանուցագրերի ետևի էջում։ Դուք կարող եք վկաներ բերել։ Դուք անվճար թարգմանչի իրավունք ունեք։ Հարցրեք տարածաշրջանից, թե ինչպես կարող եք թարգմանիչ գտնել։
  - Եթե Ձեր խնդիրը կապված է Ընդհանուր օժանդակության կամ ընդհանուր օգնության հետ, Դուք պետք է տարածաշրջանային լսում պահանջեք։
  - Եթե Ձեր խնդիրը կապված է Սոցիալական ապահովության արտոնությունների

հետ, Դուք պետք է դիմեք Սոցիալական ապահովության վարչությանը։

#### Ձեր օգնության կամ ծառայությունների շարունակումը Նահանգային լամանը սպասելու ընթացքում

Տարածաշրջանը Ձեզ պետք է ծանուցազիր ուղարկի մինչև Ձեր օգնությունը կամ ծառայությունները փոխելուց` առնվազն 10 օր առաջ։ Եթե լում խնդրեք մինչև որևէ գործողության տեղի ունենալը, կարող եք Ձեր լամանը “սպասելու ընթացքում օգնություն” ստանալ։ Սա նշանակում է, որ Ձեր օգնությունը նույնն է մնում մինչև որ Դուք լաման որոշումը չստանաք։

#### Դուք ՊԵՏՔ Է լսում պահանջեք ցանկացած նոր ծանուցազիր ստանալու համար, եթե չհամաձայնվեք։

#### ԻՆՉՊԵՍ ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԼՍՈՒՄ ՊԱՀԱՆՁԵԼ

- Հեռախոս. Նահանգային լսում պահանջեք դիմելով Սոցիալական ծառայությունների Կալիֆոռնիայի բաժնին` (800) 743-8525 կամ (800) 952-5253 հեռախոսահամարներով
- Լրացրեք Ձեր Գործողության ծանուցագրի (NOA) ետևի էջը կամ խնդրանքն ուղարկեք` CDSS, State Hearing Division 744 P Street M.S. 09-17-37 Sacramento, CA 95814

#### ԱՐԳԵԼՎԱԾ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Նահանգի օրենքին համաձայն, նպաստների գործակալությունները կարող են Ձեզ այնպիսի օգնություն, արտոնություններ կամ ծառայություններ չտրամադրել, որը տարբերվում է ուրիշներին տրամադրվող օգնությունից, հիմնված հետևյալի վրա`

*Ռասա, մաշկի գույն, ազգային ծագում (լեզուն ներառյալ), էթնիկական խմբի նույնականացում, տարիք, հաշմանդամություն, կրոն, սեռ, սեռական կողմնորոշում, քաղաքական պատկանելություն, ամուսնական վիճակ կամ տնային ընկերակցություն*

Դաշնային օրենքը նաև արգելում է խտրականությունը մի քանի, բայց ոչ բոլոր, վերոհիշյալ հիմքերի հիման վրա։ Դաշնային օրենքը նաև արգելում է`

- Երեխային որդեգրման կամ հոգեծնողների խնամքի հանձման մերժումը կամ հետաձգումը` հիմնված որդեգրող ծնողների կամ հոգեծնողների կամ երեխայի ռասայի, մաշկի գույնի կամ ազգային ծագման հիման վրա;
- Ցանկացած անհատին զրկել հնարավորությունից դառնալ հոգեծնող կամ որդեգրող ծնող` ներգրավված անհատի կամ